ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հունիսի 23-ից 25-ը Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Խաչիկ Սողոմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Փարիզ, 2022թ. հունիսի 23-ից 25-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Միջազգային տրանսպորտային համաժողովի քարտուղարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Մասնակցելու 2022թ. հունիսի 23-24-ը կայանալիք Միջազգային տրանսպորտային համաժողովի կողմից կազմակերպվող «Ավտոմիբլային տրանսպորտի խմբի» հանդիպմանը, որը վերաբերում էր միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների ոլորտում ՏՆԵԿ բազմակողմ քվոտայի և դրա զարգացման հետ կապված տարբեր հարցերին:

6. **Քննարկված թեմաները՝**

Քննարկվել են միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների ոլորտում ՏՆԵԿ բազմակողմ քվոտայի և դրա զարգացման հետ կապված տարբեր հարցերի վերաբերյալ քննարկում, Հայաստանում Որակի Խարտիայի ներդրման հետ կապված հարցերի քննարկում, ՏՆԵԿ թույլտվությունների ամբողջական թվայնացման հնարավորության, դրանց կառավարմանը և գործնական կիրառությանը վերաբերող հարցերի քննարկում, Ուկրաինային և Մոլդովային հատուկ քվոտաների տրամադրման հարցի քննարկում, Հայաստանում միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով ուսումնական կենտրոն ստեղծելու և զարգացնելու հարցերի քննարկում, վարորդների պակասուրդի և նրանց պայմանների բարելավման հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեղի են ունեցել հանդիպումներ Միջազգային տրանսպորտային համաժողովի քարտուղարության, Լատվիայի, Գերմանիայի, Մալթայի ներկայացուցիչների հետ: Ելույթով ներկայացվել է Հայաստանի հայտի վերաբերյալ հաշվետվություն՝ Հայաստանում Որակի Խարտիայի ներդրման հետ կապված իրականացված աշխատանքների վերաբերյալ: Քննարկվել են Հայաստանին տրվող ՏՆԵԿ քվոտաների քանակի և դրանց տեսակի վերաբերյալ, Հայաստանում միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով ուսումնական կենտրոն ստեղծելու և զարգացնելու, առանձին երկրների հետ համագործակցելու հարցերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջազգային տրանսպորտային համաժողովի քարտուղարության և Լատվիայի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում Որակի Խարտիայի ներդրման և միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների վերապատրաստման ու որակավորման բարձրացման նպատակով ուսումնական կենտրոն ստեղծելու գործընթացներին աջակցելու վերաբերյալ: Նշված հարցերը քննարկելու համար իրականացնել առցանց հանդիպում 2022թ. օգոստոս ամսին (նախնական):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջազգային տրանսպորտային համաժողովի կողմից կազմակերպվող «Ավտոմիբլային տրանսպորտի խմբի» հաջորդ հանդիպումը տեղի կունենա 2022թ. հոկտեմբերի 6-ից 7-ը, որը կարելի անցակցնել Հայաստանում: Դա հնարավորություն կտա մասնակից երկրների ներկայացուցիչներին տեղում ծանոթանալ Հայաստանում Որակի Խարտիայի ներդրման մասով իրականացված ախատանքներին և աջակցել այդ գործընթացին: Հաջորդ հանդիպումներին նույնպես ունենալ ներկայացուցիչ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

28.06.2022թ.